Հավելված N 87
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.4-Ղ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Կազմակերպում է հանրապետության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրում, դասակարգում և ներկայացնում է առաջարկություններ դրանց տարբերակված և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
2. կազմակերպում է գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթերի մշակում և համակարգում է դրանց իրականացումն ապահովող միջոցառումների մշակման աշխատանքները,
3. կազմակերպում է գյուղատնտեսական հողերի չօգտագործման պատճառների բացահայտման և արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման աշխատանքները,
4. կազմակերպում է մասնակցություն գյուղատնտեսական հողատեսքերի համակարգված դիտարկումների անցկացման կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,
5. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության մարզերի, Հայաստանի Հանրապետության ամփոփ հողային հաշվեկշիռների, համայնքների հողերի ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունների, համայնքների

(բնակավայրերի) գլխավոր հատակագծերի առաջադրանքների նախագծերի, հողային հարաբերությունների հետ առնչվող այլ փաստաթղթերի ու գրությունների քննարկումը ու կարծիքների ներկայացումը,
6. կազմակերպում է ջրային ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,
7. կազմակերպում է հողի շուկայի հետ կապված խնդիրների ուսումնասիրման և իրավական դաշտի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքները,
8. կազմակերպում է մասնակցություն իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին,
9. կազմակերպում է Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով իրեն վերապահված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսական ռեսուրսների տարբերակված և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
- համակարգել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքները,
- մասնակցել գյուղատնտեսական հողատեսքերի համակարգված դիտարկումների անցկացման կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,
- կարծիքներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզերի, Հայաստանի Հանրապետության ամփոփ հողային հաշվեկշիռների, համայնքների հողերի ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունների, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի առաջադրանքների նախագծերի, հողային հարաբերությունների հետ առնչվող այլ փաստաթղթերի ու գրությունների վերաբերյալ,
- հողի շուկայի հետ կապված իրավական դաշտի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման նպատակով տեղեկատվություն պահանջել համապատասխան ստորաբաժանումներից և մարմիններից,
- մասնակցել իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել հանրապետության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակը և դասակարգել ստացված տեղեկատվությունը,
- մշակել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթեր,
- բացահայտել գյուղատնտեսական հողերի չօգտագործման պատճառները և մշակել արդյունավետության բարձրացման միջոցառումներ,
- մասնակցել Հայաստանի Հանրապետության մարզերի, Հայաստանի Հանրապետության ամփոփ հողային հաշվեկշիռների, համայնքների հողերի ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունների, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի առաջադրանքների նախագծերի, հողային հարաբերությունների հետ առնչվող այլ փաստաթղթերի ու գրությունների

քննարկումներին,

- տրամադրել ջրային ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ եզրակացություններ,
- ուսումնասիրել հողի շուկայի հետ կապված խնդիրները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Հասարակայնության հետ կապերի ապահովում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Փաստաթղթերի նախապատրատում
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: